



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

16 ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի, N 78-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 06-112-0996-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,006 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ և 28-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ, 77-րդ 78-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 464-րդ, 465-րդ հոդվածների, «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «ՊԵՏԱԿՎՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 286 որոշման, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 15-ի N 27-Ա որոշման՝

որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկում (Օձունի համայնքապետարանի վարչական շենքում, հասցե՝ գ. Օձուն, փողոց 6, թիվ 10) 2020 թվականի հուլիսի 20-ին ժամը 12:00-ին, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով ժամանակավոր օգտագործման տրամադրելու նպատակով՝ անցկացնել բաց մրցույթ՝ հետևյալ լոտով.

1) Լոտ 1. 06-112-0996-0007 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության, 0.006 հեկտար մակերեսով հողամասը (այտուհետ՝ անշարժ գույք):

Անշարժ գույքի տարեկան վարձավճարի մեկնարկային գնի չափը սահմանել 5500 (հինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, նախավճարի նվազագույն չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը մասնակցության վճար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

2. Մրցութային հանձնաժողովին՝

1) սահմանել մրցութի պայմանները, որոնք պետք է ներառեն, անշարժ գույքի նպատակային և գործառնական նշանակությունը, չափը և վարձակալության ժամկետները, գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցողիների առկայությունը, անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները:

Մրցութային հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ:

2) Մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ հրապարակել մրցույթի առարկայի, ձևի, անցկացման տեղի, ամսվա, օրվա, ժամի և հանձնաժողովի կողմից մշակված՝ մրցույթի պայմանների ու

պահանջների, մրցույթի անցկացման կարգի, ներառյալ՝ մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին տեղեկատվություն, <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ինչպես նաև տեղեկատվությունը (հայտարարությունը) տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում և մրցույթի անցկացման վայրում (Օձունի համայնքապետարանի վարչական շենքում):

3. Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագիր: Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար դրա անցկացման մասին ծանուցման մեջ նշված չափով մուծում են նախավճար, որի գումարը չի կարող գերազանցել մրցույթի առարկայի նախնական գնի հինգ տոկոսը: Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը:

Հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2020 թվականի հուլիսի 20-ին, ժամը 17:00-ին:

1) Եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:

2) Մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

4. Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որն իր մեջ ներառում է տվյալներ մրցույթի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին:

5. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը (նա գրկվում է նաև մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու կամ կառուցապատման իրավունքից):

Եթե մրցույթի արձանագրությունն ստորագրելուց հրաժարվում է հանձնաժողովը, ապա կազմակերպիչը պարտավոր է մրցույթում հաղթած անձի նախավճարը վերադարձնել կրկնակի չափով:

6. Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:

7. Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի բնակչին կամ տվյալ համայնքում գրանցված իրավաբանական անձին:

8. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին:

1) Անշարժ գույքը վարձակալության իրավունքով ժամանակավոր օգտագործման տրամադրելը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չեն խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, չեն խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



2020թ., հունիսի 16
Լոռու մարզ, գ. Օձուն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունիսի 2020 թվականի N 79-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՅԳԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-012-002 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,171
ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

1. Օձուն համայնքի, Այգեհատ գյուղի կադաստրային քարտեզի 06-014-012-002 ծածկագրով, 0,171 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել Օձուն համայնք, գյուղ Այգեհատ, փողոց 10 տուն 4 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

17 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ, N80-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԾԱԹԵՐ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՂԻ 06-048-0032-0001
ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,191 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ
ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

որոշումեմ.

1. Օձուն համայնքի, Ծաթեր գյուղի կադաստրային քարտեզի 06-048-0032-0001 ծածկագրով, 0,191 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել Օձուն համայնք, գյուղ Ծաթեր, փողոց 1 թիվ 18 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՕԾՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2020 թվականի, N 81-Ա

**2020 թվականի ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԾՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ
ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. 2020 թվականի հունիսի 24-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ համայնքի ղեկավարի աշխատասենյակում, գումարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու հերթական դռնբաց նիստ (գեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան):

2. 2020 թվականի հունիսի 24-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերի որոշումների նախագծերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ



2020թ., հունիսի 17,

«Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն»

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու

2020 թվականի հունիսի 17-ի N 81-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ՏԱՍԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Araces

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2020 թվականի, N 82 -Ա

**ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 72-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 38-րդ հոդվածի 3-րդ մասով և 39-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով,

հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշումը և 12.05.2020 թվականի Օձունի համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի եզրակացությունը՝

որոշում եմ՝

1. Աղաբեկ Ավետիքի Դավթյանին /ծնված 22.10.1947 թվականին, հասցե՝ քաղաք Վանաձոր, Իսահակյան փողոց, շենք 5, բնակարան 2/ թույլատրել վաճառել իր խնամարկյալին՝ անգործունակ ճանաչված անձ Գայանե Աղվանի Դավթյանին /ծնված 09.05.1970 թ. / համասեփականության իրավունքով իրեն պատկանող հետևյալ անշարժ գույքերի 1/2 բաժնեմասն ամբողջությամբ՝ 0.53 հա /ծածկագիր 06-020-0108-0006/, 0.12 հա / ծածկագիր 06-020-0118-0068/ , 0.2 հա /ծածկագիր 06-020-0115-0075/ վարելահողերը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գյուղ Արևածագ, փողոց 5, տուն 20 հասցեում գտնվող իրեն պատկանող անշարժ գույքի 1/2 բաժնեմասն ամբողջությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

(Handwritten signature)



17.06.2020թ.

ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 83-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-014-0535-0008
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.01032 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ
ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ և 24-րդ կետերի, 42-րդ, հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածի, 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ, 80-րդ, 81-րդ և 94-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 286 որոշման հիմք ընդունելով 2020 թվականի հունիսի 18-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանում տեղի ունեցած սակարկության արդյունքը՝ մրցույթի արդյունքների մասին թիվ 2 արձանագրությունը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0535-0008 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի, 0.01032 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով, տարեկան 14000 (տասնչորս հազար) ՀՀ դրամ վարձավճարով, ժամանակավոր օգտագործման տրամադրել 2020 թվականի հունիսի

18-ին Օծունի համայնքապետարանում կայացած մրցույթի հաղթող Գևորգ Արշակի Վարդանյանին:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հողամասի վարձակալության իրավունքով տրամադրման դեպքում չեն սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չեն խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, չեն խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2020թ. հունիսի 18
«ՀՀ Լոռու մարզ, Օծուն համայնք, գ. Օծուն»



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

18 ՀՈՒՆԻՍԻ 2020ԹՎԱԿԱՆԻ, N 84-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԾԱԳ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ 06-020-
0016-0003 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,162 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

Որոշում եմ.

1. Օձուն համայնքի, Արևածագ գյուղի կադաստրային քարտեզի 06-020-0016-0003 ծածկագրով, 0,162 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել Օձուն համայնք, գյուղ Արևածագ, փողոց 5 թիվ 20 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

18 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 85-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՕԶՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-112-0460-0035
ՏԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 43-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 80-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 63-րդ, 67-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ,

որոշում եմ.

հիմք ընդունելով 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում տեղի ունեցած աճուրդի մասին թիվ 1 արձանագրությունը

1. Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Օձուն համայնք, Օձուն գյուղի, փողոց 5 թիվ 71/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0035 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության, 0.0238 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20022020-06-0042)՝ գյուղատնտեսական արտադրական գործունեություն իրականացնելու նպատակով, 125000 (հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ արժեքով վաճառել 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում կայացած աճուրդի (լուտ 1-ի) հաղթող Աշխեն Հայկասարի Մակիջանին:

2. Աճուրդում հաղթած անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը:

Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող են ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գներ առաջարկած անձիք, որոնք

նույնպես պարտավոր են 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

1) Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, նրանց հետ կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

2) Աճուրդում հաղթած անձի (անձանց) հետ պայմանագիր կնքելիս նրանց մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքվող պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

3) Օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները (Համայնքն իր տարածքում տնտեսական գործունեությունը խթանելու նպատակով իր օտարած հողի նկատմամբ հինգ տարվա ընթացքում ունի առաջնային հետգնման իրավունք հողամասի շուկայական գնով: Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով):

4) Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

3. Պայմանագիր կնքելուց կողմերից մեկի խուսափելու դեպքում մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև դրա կնքումից խուսափելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

18 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 86-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐԴԿԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-017-0121-0011
ՇԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 43-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 80-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 63-րդ, 67-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ,

որոշում եմ.

հիմք ընդունելով 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում տեղի ունեցած աճուրդի մասին թիվ 2 արձանագրությունը

1. Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Օձուն համայնք, Արդվի գյուղի, փողոց 1 թիվ 1/5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-017-0121-0011 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական, 0.31795 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16032020-06-0028)՝ գյուղատնտեսական արտադրական գործունեություն իրականացնելու նպատակով, 862500 (ութ հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ արժեքով վաճառել 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում կայացած աճուրդի (լուտ 2-ի) հաղթող Հայկ Լևոնի Կիրակոսյանին:

2. Աճուրդում հաղթած անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը:

Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող են ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գներ առաջարկած անձիք, որոնք

նույնպես պարտավոր են 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

1) Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, նրանց հետ կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

2) Աճուրդում հաղթած անձի (անձանց) հետ պայմանագիր կնքելիս նրանց մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքվող պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

3) Օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները (Համայնքն իր տարածքում տնտեսական գործունեությունը խթանելու նպատակով իր օտարած հողի նկատմամբ հինգ տարվա ընթացքում ունի առաջնային հետգնման իրավունք հողամասի շուկայական գնով: Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով):

4) Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

3. Պայմանագիր կնքելուց կողմերից մեկի խուսափելու դեպքում մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև դրա կնքումից խուսափելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

18 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 87-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐԴԿԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-017-0101-0125
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 43-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 80-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 63-րդ, 67-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ,

որոշում եմ.

հիմք ընդունելով 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում տեղի ունեցած աճուրդի մասին թիվ 3 արձանագրությունը

1. Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Օձուն համայնք, Արդվի գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-017-0101-0125 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արտավայրի հողատեսքի, 3.5 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24122019-06-0032)՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 1725000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ արժեքով վաճառել 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում կայացած աճուրդի (լուտ 3-ի) հաղթող Մարգո Միսակի Հարությունյանին:

2. Աճուրդում հաղթած անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը:

Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող են ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գներ առաջարկած անձիք, որոնք նույնպես պարտավոր են 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

1) Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, նրանց հետ կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

2) Աճուրդում հաղթած անձի (անձանց) հետ պայմանագիր կնքելիս նրանց մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքվող պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

3) Օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները (Համայնքն իր տարածքում տնտեսական գործունեությունը խթանելու նպատակով իր օտարած հողի նկատմամբ հինգ տարվա ընթացքում ունի առաջնային հետգնման իրավունք իողամասի շուկայական գնով: Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով):

4) Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

3. Պայմանագիր կնքելուց կողմերից մեկի խուսափելու դեպքում մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև դրա կնքումից խուսափելու հետևանքով պատճանոված վնասները հատուցելու պահանջով:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

18 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 88-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐԴԿԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-017-0101-0126
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 43-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 80-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 63-րդ, 67-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ,

որոշում եմ.

հիմք ընդունելով 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում տեղի ունեցած աճուրդի մասին թիվ 4 արձանագրությունը

1. Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Օձուն համայնք, Արդվի գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-017-0101-0126 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրի հողատեսքի, 0.9577 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02032020-06-0036)՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 575000 (հինգ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ արժեքով վաճառել 2020 թվականի հունիսի 18-ին Օձունի համայնքապետարանում կայացած աճուրդի (լուտ 4-ի) հաղթող Հայկ Լևոնի Կիրակոսյանին:

2. Աճուրդում հաղթած անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը:

Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող են ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գներ առաջարկած անձիք, որոնք նույնպես պարտավոր են 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

1) Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, նրանց հետ կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

2) Աճուրդում հաղթած անձի (անձանց) հետ պայմանագիր կնքելիս նրանց մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքվող պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:



3) Օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները (Համայնքն իր տարածքում տնտեսական գործունեությունը խթանելու նպատակով իր օտարած հողի նկատմամբ հինգ տարվա ընթացքում ունի առաջնային հետգնման իրավունք հողամասի շուկայական գնով: Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով):

4) Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

3. Պայմանագիր կնքելուց կողմերից մեկի խուսափելու դեպքում մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև դրա կնքումից խուսափելու հետևանքով պատճանոված վնասները հատուցելու պահանջով:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ  **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ** 

2020թ., հունիսի 18,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

19 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 89-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱԳՎԻ
ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-058-0004-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,133
ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ .դեկտեմբերի 29-ի. «Հայաստանի Հանրապետության քաղմքային եվ գյուղական բնակավայրերում նե բնակավայրային աշխարհագրական օբյեկտն վայրի համարակալման, հասցեավոր ման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

1. Օձուն համայնքի, Հագվի գյուղի կադաստրային քարտեզի 06-058-0004-0002 ծածկագրով, 0,133 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել Օձուն համայնք, գյուղ Հագվի փողոց 1, թիվ 37 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Armen

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

